

Գ Ի Ի Ղ Ի Ա Յ Ր Ի Ն

«Ողորմութիւն արէք, պարոն
Անտուն, անտէր աղքատին...»

Ա.

Մէջուով ապին հազար տարուայ մեռելների ետեից
հասնելուց յետոյ, պարտքից աւել ոչինչ չթողեց խեղճ Սար-
գիւլի ու որբերի համար:

Գեանափոր և դատարկ խոճ[թի դրան առաջ Սարգիւլի
այտերն ամեն օր այբւում էին ու պրւոճւմ սգի արցունք-
ներից: Բայց նրան մղկիտ տուող սուգը չէ՞ թէ արդէն
մղմուղ ընկած, մեռած Մէջուովի համար էր այնքան, այլ՝
միայն շնչով կենդանի իւր ջլբաց որբերի համար, որոնք մերկ
և քաղցած մահուան դուռն էին դիմում:

Կեսնք հօ չէ՛ր. սև օր, սև պատուհաս, որ չգիտեմ
ո՞ւմ մեղքիցը, քաշում էին դառն աղքատները. կարծես
թէ բազէի ճանկերի մէջ բլբլուած և կամ բուռի մէջ ան-
սնունդ մնացած ճնճղուկի ձագեր լինէին, այնպէս էին հան-
գել, հատել, նիհարել ու ցամաքել: Միայն շուռններն էր
դուրս գալիս, և եթէ բթներից բռնէիր, այն էլ կկտրուէր:

Ուտելիքները ո՛չ համեմած խորոված էր և ոչ իւղած
փլաւ. մի կտոր չոր ճաթ էր, այն էլ պիտի Աստուած տար—
Մէջուովը չկար, որ՝ յոյսն իւր կռան—մանգաղի, բահի և
կամ քնգի վրայ դրած՝ գնար շահով շէնացած և խիղճը
մեռած վաշխառուից՝ մինին տասը ետ տալով, ուրիշ աղ-
քատների պէս պարտք անէր, բերէր նրանց կերակրէր և
ինքը ծանր տոկոսների տակ հեծեծելով անքար ու տնքա՛ր
մինչի մահ գերեզման:

Դժուար բան — մի թշուառ, մի անօգնական կինարմատ, վեց ագահացած որս. ի՞նչ անէր: Հակառակի պէս ինքն է՛լ, Մէջլումն է՛լ որս էին ամուսնացել — ոչ ազգական ունէին և ոչ մի սրտացաւ, որ մի աման տաք կերակուր և կամ մի պատառ հացով օգնութեան գար: Մենակ մի ճախարակով և մի սանդերքով — սրա նրա մանածն անելով ու բուրդը գղելով այնքանի «բողազը» ո՞նց պահէր և լաշները ո՞նց նորէր: Ո՛հ, չեմ կարծում, թէ դժոխքի սատանաներն էլ այնքան անգութ գտնուէին, այնքան անարգէին, տանջէին նոյն իսկ մեղսալից մարդուն, որքան այն դառն աղքատութիւնը, որ լքացնելով անբաղդ պրուռ, օրի ալրի պարկի «փուշին» կտրուելուց բացի, ճաթի հացի փշրուներն էլ վաղուց էր հատել և անօթի թողել ագահացած որբերուն, որոնք հացի պատառը տեսնելիս ուզում էին թէ իրենց մօր ձեռներն էլ հետն ուտեն, այնպէս վրա՛ էին թափուում ու խլում միմեանցից. իսկ երբ այն պատառը կամ չէր ճարուում և կամ ուշ ձեռք բերւում, նրանց նայողն արդէն այլ ևս առանց լացի, առանց կարեկցելու չէր դիմանում: Սառնասիրտ նկարագրել չէր կարելի, թէ նրանք՝ թխսի շուրջը սվսուռոջ սոված ճուտերի նման իրենց ամբողջ մօրն ի՞նչ պէս էին աղերսում: Նրանց երկինք հասնող բաղջի ձայները, աւելին որ չասեմ, զգայուն սրտերի մէջ սրեր էին ցցում:

Նրանցից մինը՝ մաղերը գզգզուած, շապկի միմայն մի օղ շինքին, մնացածը բոլորովին մերկ, բեղբեղուած ոտներով պատի տակ կռթնած՝ աղի արցունք չափելով, մղկտում այսպէս.

— Վա՛յ, նանի ջան... վա՛յ, սոված եմ, վա՛յ...

— Վա՛յ, սոված սիրտս գնում ա, վա՛յ մի պատառ հաց, — նոյն դրութեան մէջ երեսի վրայ գետին ընկած նրաւում էր երկրորդը:

— Աճի, նանի ջան, բա հէ սհէ սոված դենք մնա՛լ, — յուսահատուած հարցնում էր երրորդը և փչում իւր պըկուն: Զորորդի ձայնն արդէն կտրուել էր լացից և անձայն հեկեկում էր միայն Հինգերորդը՝ մի ձեռք ծոցում, միւսով աչքերը արորելով, բոբիկ ոտները բացրուքաշի անելով, խրճթից հեռացած արդէն դիմում էր հարւանի դուռը՝ թերևս նրանց երեխանց ձեռից ընկնող փշրանքներից կե-

րակրուելու։ Վեցերորդն էլ՝ հարամի տղուկի պէս մօր կրծքին ընկած՝ ծծում, ցամաքեցնում էր նրա՝ առանց այն էլ ցամաքած, չոր տախտակ դարձած կուրծքը։ Բայց միթէ ծնողը հաց խնդրող զաւակներին բար տայ կամ ձուկն ու զողին օձւ։— Խեղճ այրին ուզում էր մի կերպ ապրեցնել, սովից աղատել նրանց կեանքը։ Նա երկու խան գարի վարձատրութիւն ստանալու յոյսով գնացել էր ունեւորների մէկից մի «սիւմակ» բուրդ բերել մանկու, ուստի՝ արեւը գլխին ընկած, քրտինքն ու արիւն-արտասուքն իրար խառնած, սիրաւ լիքը, հոգին վրդովուած՝ հայ էր տալիս կրօններին և արագութեամբ պտտելով մանիչը, ճախարակի տըխուր բռնոցի հետ ողբերգեր էր յօրինում անվերջ։

Մանի՛ր, մանի՛ր սգանգ, ի՛մ ճախարակ,

Ջանիս Մէ'ջըմն արաւ էսքա՛ն կրակ.

Ինքը մեռաւ, վաղ կորաւ, գընա՛ց...

Եթե՛ն թողեց սհէ անտէր, անհաց...

Ա՛խ, ի՛նչ անեմ, ո՛ւր կորչեմ, ո՛վ Աստուած,

Մի՛նը, է՛րկուսը չի, վե՛ցն են մսիս էլած.

Պաշտու՛ի՛ր, վրա՛ տուր սգւո՛ր ճախարակ,

Որ՛ դարտս դարտս չի, ծո՛վ ա անյատակ։

Մանի՛ր, կանչի՛ր, բըռա՛ ու... սգա՛,

Որ մի տեղից մի հով, մի օգնութիւն գայ,

Որ լսի, որ խղձայ Աստուած, որ տե՛նսյ վերնուց,

Թէ՛ մեռնիլը սալահ՛ ա սհէ՛ ապրելուց...

Բայց, յանկարծ բաց թողեց մանիչը. լռեց ճախարակի բռնոցը— այրին յոգնեց անդուլ մանկելուց։ Ուշքը թռա՛ւ։ Մի առ ժամանակ նուազոտած երեխանցը, երկնքին նայեց, մրմնջաց դառնապէս, ապա աղերսալից աչքերը երկնքից սարերին, սարերից էլ ձգեց հեռու տարածուած դաշտերին, ուր ամենի արտում հնչում էր մահագողը և զրընգում գերանդին, ուր ուրիշների շարիշար դրած բարդերն ու գեղերը ողջունում էին հանդին, իսկ իւր որբերի գարին՝ Մէջլումի տէրամեռ ծլաքը միայն, դեռ էլի կծղում, չորանում, կռթնում ապփիցն էր կպչում և կարծես լեզու եղած՝ «վայ աէ՛ր, վայ հնձո՞ղ էր կանչում։

Ծլաքի տխուր տեսարանը այրուն նորից հոգեհեց, աչքերից արտասուքի տեղ կայծեր և բլթէն մուխ արձակեց։

—Ա՛ղճի, ա՛ խեղճ ու նաչար, դէ քիչ լաց ըլի, բե՛ւ մղկըտայ, է՛: Տնաշէնի աղճիկ, մի ջուխտ աչք ունես, էն էլ որ բոռացնես, ո՛վ ա բու բիւլիաթի տէրը,—երկու գարու հաց կռն տակ դրած ձայն տուեց խրճթին մօտեցող մի ողորմած պառաւ, որ քանի մի անգամ պատառ հացով և կամ մի քանի գդալ մածնով օգնել էր որբերին:

—Աճի (մեծ նանի) ջան, լաւն էն ա բոռանամ, քանց ըխանցս էս օրին, սըհէ սովամահ տենամ,—պատասխանեց լալագին:

—Ոչինչ, որդի, մեղք ես, սուս կաց. էրե՛խք են, մի օր, եա էրկու օր սոված մալով մեռնիլ չեն:

Ա՛խ, Աստուած,—խիստ ուժգին հառաչեց ողորմելին:

—Առ, ա՛ռ, էս էրկու հացովը եօլա տար ըրիկունս, էգուց էլ Աստուած ողորմած ա. յոյսդ մի կտրիլ, նա իր ստեղծածներին կորցնիլ չի:

—Է՛լ ոնց կորցնի, նանի ջան, մի հլա տէրը մեռած արտիս էլ մտիկ արա՛, է՛: Ա՛խ, Մէջլըմ, բու մէջքդ չկոտրի, էս ի՛նչ հալի թողեցիր մեղ...

Օրհնուած պառաւի ձայնն Աստուծոյ ձայնի նման հընչեց կարծես և պատերի տակ քաղցից նուաղկոտած որբերին յարութիւն տուեց: Նրանք զօրութիւն առած վերկացան տեղներից և թաթները (մկնած) պարզած մօտենալով նրան, մի մի պատառ առան և ագահութեամբ՝ աչքներն էլի ձեռքը յառած, սկսեցին կծոտել ու կծոտել: Իսկ պառաւը, երևի չգիմանալով սրտաճմիկ տեսարանին, էլ կանգ չառաւ, մինը պատառ-պատառ արաւ, միւսը Սարգիւլի գոգը գրեց ու անցաւ գնաց:

Սարգիւլը արտասուքը սրբելով հացից մի պատառ էլ ինքը ծամեց և ապա սափորն առնելով՝ տխուր, արառմբ քայլերն ուղղեց դէպի աղբիւրը:

—Տղերք, էսքան վախտ ա մտիցս ընկել ա, որ հարցնե՛մ, թէ էն խեղճ որբըվերին (որբ և ալրին) ընչո՛վ ա եօլա տանըմ էնքան քիւլֆաթը,—ջրի ճանապարհին նկատելով այրուն, հարցրեց մի աղբատ:

--Աալլահ, ես էլ չեմ հարցրել, Արթին, զորթ հն ա պահեմ:

—Ասըմ են մանած ա անըմ:

— Վայէ՛, անտէր լի մանածը, մանածով եա գզածով
ըեկի փոր կկշտանայ, — Լոկ խօսքով կարեկցեց երրորդը:

— Շատ դժար ա, ես իմ Աստօծը, տաշտըմը հաց
չուենցող տղամարդն իսկի կարըմ չի երկու-երեք հոգի
պահի, ի՞նչ անի եդ դառն աղքատ կնիկը:

— Բու խէրը շատ լի, Ակոբ, դու հաց չուեննա՞ն ես
ասըմ. ասըմ են էն անիրաւ, անմրուաթին էլի բան են
պարտ:

— Ի՞նչ ես ասըմ:

— Աստօծ վկայ, ասըմ են էլի բուչուխ կայ:

— Եանի ասըմ էք առնի՞:

— Դրա անօրէն հէրն անիծած, ասել ա «հէնց որ
գարու ծլաքը հնձիլ տայ, պէտքա գարիս առնեմ:

— Ղօրթ:

— Է՛ կծըպըծանը գիտենայ — (արեգակը վկայ):

— Թի՛ւ:

— Հաբա՛:

— Ա՛, եանի հաւատալու, եա լսելու բան ա, որ նա
եդ ասել ա՛:

— Զուր չես հաւատըմ, տասը մարդի կշտի ա ասել:

— Բա չի ամաչե՞լ:

— Ամենեին:

— Խի՛, Մարկոս, դու նոր ես ճնանչըմ նրա՞ն, նա էն-
պէս մարդ ա, որ ըրիսին թքելիս ասըմ ա անձրեւ ա գալի:

— Փո՛ւ, անամօթ, քանդեց, էլի՛. — Դին հինգ, տասը
շահ առնելով, թամա՛մ քանդեց էս գեղը:

— Թող դ՛հէ՛ անի, դրան է՛լ չի մեալ, վերեւ Աստօծ
կայ, ներքեւ գետին, մի օր էլ Մէջը՛մի ուղտը դրա որդկե-
րանց դռանը կչորի:

— Տայ Աստուած, տայ Աստուած, որ հինգը չորի:

— Դանէլ ապի, էլ ուրիշի պարտ ա մեացե՞լ, թէ մի.
նակ դրանն ա:

— Տասը չանաղ էլ Չնթռէկի տղին ա պարտ:

— Օ՛, — օձիքը բռնելով գոչեց մի ուրիշը, — մի սև օձ
էլ նրա ճառովը (վզովը) փթաթուի, նա էլ կառնի, թեկու-
ղէ հէնց եթիմեերից վեցն էլ կոտորուելիս լինին սովից:

— Ովվէ՛:

— Բա՛, Բա էլ ինչի են Ձեթուկի տղայ ասում: *)

— Էլի հաւատաւ չի գալի, թէ նրանք էնքա՛ն անիրաւութիւն անեն, Դանէլ ապի:

— Հաւատա, հաւատա, կանեն, կառնեն:

— Ե՛, ղորթ ա, ասում էք, համա ընչի՞ցը կառնեն. անպաղըների էլած. չեղածը մի պղինձ ու մի սինի էր, էն էլ չէնց ղորմածիկ Մէլլըմի կենդանի վախտը խեցին գարուն-պրուայ խարջի համար ծախեցին, է՛, էրկու կծղած գարու ծըպար էլ ունեն, ընդոնք էլ չուել հնձուկը ղշերի ու մինների միայ են դառնալու:

— Դրուստ ա, էլ ի՞նչ մնաց:

— Դէ լաւ. դուք խու ձերն ասացիր, ես էլ ի՛մը, ապրենք Ասաըծով ու կտեսնենք անիրաւութիւնը...:

Բ.

Սարգիւլը վերադարձաւ ջրից բաւական ուշ: Նա երկու հաց էլ էր ձարել. մինը կրկին պատառ-պատառ արաւ ոտքերին կերակրեց, քնացրեց և ինքն սկսեց մտածման ծովների մէջ ընկնել:

— Բա ո՛նց անեմ, որ ես էն երկու ծըլաքը հնձիլ տամ, Ա՛ստօծ ջան. ո՛ւմ դուռը գնամ, ումն աղաչեմ, ում ոտները լիզ տամ... որ...

Չէ՛. կորան, գարիքս կորա՛ն. էլ ձար չի մնացել, առաւօտը վեր կենամ, ըեխանցս թաթից բռնած գեղն ընկնեմ, սոված գոմն արած կովի պէս բառաչեմ, պուրնգնուտամ, բալբի ողորման, բալբի միքանի հնձող տան...

Խեղճ այրին անվերջ մտածմունքներով, անսահման վրշտերով և կիսաապուտ յոյսերով երեխանց մօտ պառկեց, բայց չնայելով այնքան յոգնած լինելուն, բունն ամենևին չտարաւ. երեխայք երազում էլ հաց էին խնդրում...

Կիրակի լուսացաւ գիշերը. այրին գլխի պատուառած փաթաթանով երեսը ծածկելով — ամօթխածութեամբ և ակնածութեամբ, մերկ մանուկ որբը գրկում հուպ տուած և

*) Լայնաբերանի կամ գայլաբերանի տղայ:

միւսներին ետեւիցն արած, մօտեցաւ գիւղական ժողովին, գլուխ տուեց բերա տանուտէրին և մի պատանու բերանով իւր աղերսախառն խնդիրը յայտնեց:

— Ի՜նչ ա ասըմ, ընչի՞ ա եկել, Ակոբ, — Թարգմանիչ պատանուն դիմելով աղայաբար, հարցրեց նա խկոյն:

— Տանուտէր, ասըմ ա չբօխվին ասա՛ իմ իրեսը քու տօի տակը — վերեւ Աստոծ, ներքեւ դժու. եթիմիս մնացել են սոված, գարուս ծըլաքնին էլ հնձելու. միքանի հնձող զրկի, թող հնձեն ինձ տանս:

— Աղճի, հէնց դրա համար ես եկե՛լ, — լսելուց յետոյ դիմելով այրուն, հարցրեց տանուտէրը:

Այրին ձեռը կրծքին դնելով, խոնարհ գլուխ տուեց, իսկ պատանին Թարգմանեց:

— Տանուտէր, ասըմ ա Վրաման բեզ:

— Հա, շնորհակալ եմ, լաւ ա ասըմ, ամա շատ բիմար կնիկ ա դա: Աղճի, տօ բիմար, որ ասըմ ես հնձող զրկի արտս, հնց զրկեմ, Թագաւորի կող ա, որ զամշին քաշեմ ըրաւունք բանացնեմ: Գեղ են, գեղական են, ինքդ գնա, աղաչի, պաղատի, թէ կըգնան, կհնձնեն, թող հընձեն, իմ կուշտն ո՛ւր ես եկել... — պատասխանելով այրուն, դարձաւ գիւղի տէր Բաբային և հարցրեց. «էսպէս չի՞, տէր Բաբա»:

— Հրաման բեզ, էդպէս ա, բա՛ս, տանուտէր, — աւետարանի բարոյիչն ևս այնպիսի անտարբերութեամբ վկայեց և պատասխանեց, որ, եթէ հէզ և խոնարհ Յիսուսն աշխարհիս վրայ լինէր, անշուշտ մի ապտակ կտար երեսին և խարազանով դուրս կըջէր նրան իւր եկեղեցուց:

— Գնա՛, գնա՛, այ բիրա (այ՛ բղր), ըսօրուայ օրն՝ ի՛ր աշխատանքը կթողայ ու քեզ համար հունձ կգայ. լի օրը ամենքն իրանց բանին են. դէ թէ էրեցն իրաւունք կըտայ, թող գանք կիրակուց հնձենք արտդ, — ասացին ոմանք:

— 2է՛, չէ՛. կիրակուց ո՞նց կլի հնձել, մեղք ա, անկարելի բան ա, — երկրորդ յանցանքը գործելով, արգելեց տէր Բաբան և արտասուքն երեսին եդ դարձրեց յոյսը հատած այրուն:

— Անբան սատանի բա՛ծ, ձեռդ խալխին դէմ անելու տեղ՝ մի սուրու (մի հօտի չափ) լակոտնի ունես, վեկէ՛ց, հա-

ւաքի, տար արտդ արա, Թող քիչ-քիչ քաղեն, էլի. կասես թէ՛ Սարումանց Գիւլջըհանիցը դա անդիզ կնիկ ըլի որ հրէ էրեւէքը ետեւիցն արած արտերը վուրհաւուր քաղըմ ա,— ետեւից նախատինք թափելով ասացին նաև ուրիշները, ամենեւին չմտնելով նրա այնքան դառնութիւնների մէջ:

Բայց ի՞նչ անէր անբաղդ այրին. ինքն իբրև կինարմատ հնձել, մանգաղ բռնել չգիտէր. տանուտէրը բաց էր ասել, տէր Բաբան էլ Պիղատոսի պէս ձեռները լուացել, անիոյթ հովուի պէս հեռու էր կանգնել: Նա գիւղական ժողովարանից երես դարձնելուց յետոյ՝ թաղից թաղ անցնելով, նորից փորձ արաւ սրան-նրան գիմկ, բայց գիւղն անողորմ դարձաւ— ում աղաչում, պաղատում, ում դուռը բաղխում, ոտքները համբուրել, գլխներովը ման տալ էր ուղում մատաղացուի պէս, դարձեալ նոյն կոշտ ու կոպիտ պատասխանն էր ստանում թէ՛

-- Ա՛ղձի, իրեսդ խի՞ ես ջհուգի իրես շինել. բանի գաս, բանի զահլաքիւշտ անես մեզ. մերը թողենք ու գանք բունը հնձե՛նք: Մի տուն լակոտ-լուկոտ ունես, տար արտդ արա Թող քաղեն, էլի...

Արդարև, այնուհետև էլ ուրիշ հնար չէր մնում անձարի համար. այնպէս էլ արաւ - Առաւօտները վաղ-վաղ տրորելով որբերին, խորը քնից վեր էր թռցնում, ուզած, մրած գարու հացերից մի-մի պատառ թաթներին դնում, երկուսն էլ պարկում մէջքին կապում, ու, բոբկոտն որբերին հաւի ձագերի պէս ետեւիցն անելով, գնում էր Մէջլումի անտէր ծլաքը, և, Հռութի նման ձեռները բստերին ու փշերին տալով, երեխանց հետ միասին հասկ էր ժողովում նրանց պահելու և ամուսնու պարտքի «բուհուխը» տալու համար: Բայց, ասած է՝ «ծիտն ինչ ա, թէ նրա եղն ինչ ըլի, կնիկն ինչ, թէ նրա հնձածն ինչ ըլի»։ Խեղճ այրին կարծես թէ ձախու ձեռով լինէր քաղելիս. մի ամբողջ շաբաթ անցաւ, բայց արան էլի տեղը կանգնած էր:

Հարաթ երեկոյեան Մէջլումի որբերը սաստիկ թուլացել էին քաղցից. արաից տուն վերադառնալիս թուլացած երեխայք Խաչքարի բաշում փչող թեթև բամուց անգամ ուղում էին թէ վայր ընկնեն: Սարգիւլը բաշը դուրս գալուց առաջ Կաքաւի ձորի ջրջրկուտից մի բանի թև փիփերթ էր

Ժողովել և կռան տակ հուպ տուած բերում էր խաշի, որ-
պէս զի այդ երեկոյ էլ երեխանցը նրանով «եօլա» տանի:
Նա բաշը դուրս գալուն պէս հեռուում մի սպիտակազ-
գեստ ձիաւոր նկատեց, որ ձին խաղցնելով դէմ յանդիման
գիւղն էր գալիս:

— Ա՛խ, Աստուած ջան, — մրմնջաց նա, — եւրաբ էն
ձիաւորիցն էլա ինձ մի հովութին ա գալո՞ւ... — ասաց լը-
բացած և բաշից իջաւ դէպի խրճիթը, որ այն ըոպէին մա-
նաւանդ, աւերակի տպաւորութիւն էր գործում մարդու
սրտի վրայ:

Գ.

Միւս օրը, կիրակի առաւօտեան Ժամաւորները դուրս
եկան եկեղեցուց և ըստ սովորութեան նստոտեցին դուրս
ածած կոճղերի ու բարակոյտերի վրայ: Նրանց մէջն էր նաև
այն սպիտակազգեստ ձիաւորը, որ Դ. գիւղի ուսուցիչն էր,
նա եկել էր Կ. գիւղումն էլ ուսուցնարան բանալու խնդիր
արձարծի: Ուսուցիչն այդ մասին դեռ բերան չբացած, յան-
կարծ գիւղացիներից մինը բացականչեց և նրա ուշադրու-
թիւնը հետևեալ խօսակցութեան վրայ դարձրեց:

— Մի գէնը մտիկ արէք է՛, ա՛ խալիսը, — դէպի լանջը մասնա-
ցոյց անելով ասաց նա, — էն խեղճ որբը վերին, հրէ՛, հրէ՛...

— Էն ո՛ւր ա գնում էն օրը կտրուածը...

— Մանածով էրկու խան գարի ա առել, տանում ա,
որ աղայ:

— Ո՛վվէ, խեղճ կինարմատ, համ ընխէն ա շալակել,
համ պարկը, համ էլ էն փի թաթիցը բռնել...

— Օ՛հ, Սիմոն ապի, էլ ասում ես, թէ ի՞նչ անես,
էդ ողորմելու տանջանքն ու չարչարումները՝. էրեկ սաղ հան-
դը թամամ գերեզմանատուն էր շինել — ամեն մի հասկը պո-
կելիս էնպէս էր մղկտում, էնպէս աղատ. աղատ լաց լինում,
որ մարդի սիրտ կրակ էր տալիս, էրում, խորովում: Որ
ասում էր թէ՛ «վա՛յ, Մէջըմ ջան, ես էս ի՞նչ օրի, էս
ի՞նչ հալի եմ», հէնց իմանում էի թէ երկնքիցը վրէս ծը-
ծումը ա կթկաթում. նրա մեղքիցը դիմացը փէլ չկարացի
խուրձս կապեմ, անցկացայ եալի (բլրի) էն ղոլը, որ ձէնիցը

հաշուամաշ չլինեմ: Ասլլահ, ջհանդամը, թէ բանս մի օր էլ եդ կընկնի, կիսատ արտս ելոր պրծնեմ, գնալու եմ մի օր էլա բեօմակ անեմ,—դառնուլթեամբ նկարագրելով Սարգիւլի սգալի հունձը, ասաց աղքատներից մինը, որ շնչասպառ Մէջլումին վաշխառուի հողից տուն էր բերել:

—Ասըմ են խեղճ կնիկը փորձել ա, որ մանգեղով հնձի, տուել մատներն էլ կտրտել ա:

—Դու մատներս ես ասըմ, էրեխանց ոտների տակը արեւից խաշուել, փշերից էնպէ՛ս ա բրբրուել, որ մտիկ տալ չի ըլում: Աստուած ողորմի Սանամանց պառաւի հօրը, հիւանդներից երկուսին տարել՝ հրէ իրանց սրահըմը պահըմ ա չուել նրա ջաղացից ետ գալը:

—Դէ ճնց անենք, լի օրն ամբքս մեզ համար ենք հընձըմ, կիրակուց հնձիլն էլ մեղք ա, խու կարալ չենք Ասծու դրած օրէնքը քանդենք:

Այստեղ արդէն ուսուցիչ Սիմէօնը, որին գիւղացիք Սիմոն վարժապետ պատուանունով էին կանչում, էլ չկարողացաւ տանել: Քաղաքում կրթուած, բայց գիւղացի և գիւղատնտեսութեան սիրահար այն պատուական երիտասարդը, որ գիտէր մաճ բռնել, ցանել, հնձել և այլն, բոլոր դառը նկարագրութիւններից մորմոքուեց և մանաւանդ, երբ մանրամասն լսեց նաև Մէջլումի տանջանքն և մահը¹⁾, էլ չդիմացաւ. Ղազարոսի գերեզմանի վրայ արտասուող Յիսուսի նման աչքերն արտասուքի կաթիլներով լցրած սկսեց յուզուել ու խօսել մինչ այն աստիճան, որ գեղջուկներն էլ արտասուեցին:—Սուրբ գրքից նա մէջ բերեց և արաւ պրի Հուսութիւնառմի հարսի պատմութիւնը, ուշքները կենդրոնացրեց Բառսի բարութեան, բարեպաշտութեան, մարդասիրութեան և Աստուծոյ արդար վարձատրութեան վրայ. ապա ցոյց տալով գիւղական ամբոխի, մանաւանդ տանուտէրի ու տէրաւորի տգեղ և անպատուաբեր վարմունքը դէպի անօգնական այրին, բացատրեց Աստուծոյ պատուիրանի, օրէնքի բուն նշանակութիւնը և բաջալերեց բարի գործել իսկոյն:

1) Տես «Լրամայ» 1897 թ. երես 257:

—...եղբայրք, ինչո՞ւ դուք կիրակի օրը լաւութիւն անելը մեղք էք համարում,— բարձրաձայն և համարձակ գոչեց ուսուցիչը,— Ինչո՞ւ դուք Աստուծոյ հրամանը, օրէնքը ծուռն էք հասկանում և նրան հակառակում. միթէ նրա բարկութիւնից ու պատիժներից չէ՞ք վախենում... նա այսօր ձեզ տուել է առատ արտեր, հանդ, անդաստան և առողջութիւն, բայց վաղը կարող է երկնքից կարկուտ թափել— հեղեղել, ամենել, ոչնչացնել ամեն ինչ, և ամեն մէկիդ էլ այրի Սարգիսի օրը ձգել...

— Ինչո՞ւ, ի՞նչ ենք արել Աստուծուն, Սիմոն վարժապետ ջան, մեղքներս ի՞նչ ա,— ուսուցչի վճռական խօսքերն ապշուեցնում և երկիւղածութեամբ լսելուց յետոյ՝ բացականչեց ծերունիներից մէկը։

— Սրանից էլ մեծ մե՞ղք, որ դուք այսօր պարսպասարայ այստեղ ժողովուած՝ տեսնում էք այն խեղճ այրու տանջանքը, որբերի քաղցը, մերկութիւնն ու հիւանդութիւնը և դատարկ խօսքերով էք միայն կարեկցում, ցաւում վրաները։ Բայց չէ՞ որ, քաղցածին հաց, նեղացածին օգնութիւն է հարկաւոր և ոչ թէ լոկ ցաւակցութիւն և արտասուներ։

Ես կէս ժամ առաջ ձեզ հետ միասին կանգնած էի եկեղեցու պատի տակ. տեսնում էի, թէ դուք չոր քարերի (յատակի) վրայ ինչպէս էք չոքում, ծունր դնում, ձեռքներդ վեր բարձրացնում, աղօթում— երեսներդ գետինը բռնում, սիւները և պատերը, խաչն ու աւետարանը համբուրում մեղայ գոչելով։ Բայց, ի՞նչ օգուտ այդ ամենից, երբ դուք ձեր տէր Բաբայի հետ միասին ոչ խաչի զօրութիւնն էք իմանում և ո՛չ էլ սուրբ աւետարանի քաղցրութիւնը հասկանում Քրիստոսին հակառակ հրէաների պէս։

— Վա՛ւ...,— բերանները բաց շնչացին գիւղականք։

— Փոքր ինչ համբերեցէք դուրս բերեմ ձեր սիրով ու մեղայով համբուրած ս. աւետարանը և տեսէք թէ ի՞նչ է գրած կիրակի օրուայ մասին,— շտապով մանելով եկեղեցի, աւետարանը ձեռին դուրս եկաւ, թերթեց, բացեց Մատ. ԺԻ գլուխը և մի քանի վայրկեան նայելուց յետոյ՝ ասաց,— Հրէաները կիրակի օրը ոչ կրակ էին վառում, ոչ եփում, ոչ հնձում և ոչ հաւաքում. մինչև անգամ, եթէ մէկի տունը կրակ էր ընկնում, չէին հանգցնում, ասում էին մեղք

է, Աստուած ասել է, որ պէտք է հանգստանալ: Մի կիրակի (շաբաթ) օր Քրիստոսի առաջ կանգնած էր մի մարդ, որի աջ ձեռքը բօսից չորացել, անպէտք էր դարձել, չէր կարողանում ոչ հնձի և ոչ փնջի իւր ընտանիքի, իւր որդոց համար: Յիսուս խղձաց բոստին և ամենքի առաջ չորացած ձեռքն առողջացրեց. հրէաները երբ տեսան այն, աղաղակեցին թէ՛ մի՞թէ կարելի է կիրակուց այնպիսի յանցանք գործել...: Յիսուս պատասխանեց թէ՛ «կիրակին չէ՛ մարդու տէրը, այլ մարդն է կիրակու (շաբաթի) տէրը... կիրակի օրը բարի պիտի գործել, — մարդ չպէտք է կորցնել (սպանել), այլ ապրեցնել: Սրանով, սիրելիք, Յիսուս մեզ չի՛ ասուէ, թէ՛ կիրակի օրը չպէտք է հանգստանալ, ասում է հանգստութիւնը լաւ բան է, բայց հոգեւոր աշխատանքը, բարեգործութիւնը, աղքատին օգնելը սգեւորներին միտեարելը, հիւանդներին բժշկելը և այլու կծղած արար չհնձելն աւելի լաւ բաներ են...: Լսեցի՞ք:

— Հրաման բեղ, վարժապետ ջան, լսեցինք:

— Ասում է. «ով իմ խօսքը լսի, նա կեցցէ՛ յաւիտեան»։ Դէ՛հ, վե՛ր կացէք, առէք մանգաղներդ, մինն էլ ինձ տուէք, որ գնանք Աստուծոյ խօսքը կատարենք, օգնենք այրուն և ապրեցնենք քաղցած որբերին... — ասաց նա զգացուած և ինքն առաջինը վեր ելաւ տեղից:

Մի ժամից յետոյ՝ Սիմոն վարժապետի առաջնորդութեամբ ոգեւորուած հնձողների մանգաղները փայլում էին հանգուցեալ Մէջլումի ծլաքում, իսկ երեկոյեան արդէն, երբ այրին լքացած, ալրի պարկը շալակին, երեխան գրկած և խիստ բրանքամիսած ջրաղացի կողմից խրճթի դիմացն էր դուրս գալիս, խրճան սայլերը կանգնած էին կալում և Սիմոն վարժապետն ինքն էր դիզում որբերի դարին:

Աստուծոյ ողորմութիւնը երբ տեսաւ այրին, ուրախութիւնից շփոթուած՝ երազ համարելով այն, դեռ մի առ ժամանակ աչքերին չհաւատալով արձանացաւ, ապա մօտենալով կալին՝ պարկը մի երեխան միւս կողմը նետելով՝ վազեց դէպի դէզը և կամենում էր Սիմէօն վարժապետի դռները համբուրել, իսկ վերջինս արտասուքները պահելով, հազիւ արգելում էր նրան:

— Թող որ համբուրեմ ոտքերդ, իմ եթիմների Աս-

տուածն ես դու, — ասում էր այրին և մատաղացուի պէս
պտտւում դիպի շուրջը:

Դ.

Օրն անցած, Սիմէօն վարժապետն էլ չկարողացաւ ուս-
սումնարանի հարցի մասին խօսել այս կիրակի, թողեց միւս
կիրակուն, որովհետեւ երկուշաբթի օրը դաշտային աշխա-
տանքների պատճառով գիւղում մարդ չպիտի գտնէր. ժո-
ղով, համախօսական թուղթ կաղմել էր հարկաւոր. միայն,
նա այրու կալ կալսելու հոգսն էլ քաշեց — լծկան ունեցող
մի քիաղխուդի պարտաւորացրեց լծկան տալ այրուն, և ին-
քը վերադարձաւ Դ. գիւղում դասերը շարունակելու:

Այրին ուղղով լծկանով կասեց իւր 180 խուրճը և
ստացաւ վեց թաղար (40 փուտ) գարիւ Բայց դեռ գարին
խրճթում չտեղաւորած, պարտքատէրերից մինը ամանը ձե-
ռին գգրի հետ միասին կանգնեց խեղճի գլխին և տարաւ
իւր շահը: Սարգիւլը ամենեւին չ'ընդգիմացաւ վաշխառուին,
որովհետեւ, ասաց. «ուզըմ' չեմ, որ մի քանի խան գարու
խաթեր ուշուոնց տան խեղճ մարդիս չորացած քեալլին»:

Այն օրից անցաւ երկու շաբաթ. Սիմէօն վարժապետն
այլ ևս չեկաւ Կ, գիւղը, որովհետեւ արդէն իւր բաց ուսում-
նարանի փակման մասին էլ մի տխուր լուր էր ստացել...

— Ափս՛ս... Սիմոն վարժապետ. մուրադին չհասաւ. շատ
սրտով ուզում էր, որ մեր գեղումն էլ ուսումնարան բացուի,
ամա՛... — ասում էին գիւղացիք:

— Բաս էլ վարժապետութիւն չի' անելո՞ւ... —

— Էլ որտե՛ղ...

— Տղերք, տէրտէրութիւն որ ուզենայ, ամա զորքա
տէրտէր կլի, հա՛:

— Ո՛ւրա՛, որ ուզե՛նայ խու, մեր գեղի համար օրիս-
նիլ կը տանք...

Բայց, բացի Սիմէօն վարժապետի հարցից, գիւղացիներն
հետաքրքրում էր նաև Գիգիսի աղի լուծիւնը պարտ-
քի մասին:

— Տղերք, բա չէք զարմանում աչքից մազ քաշող Գի-
գիսի աղի վրա՞. ախր գարին չի' ուզում եթի՞նքերիցը:

— Ղօ՛րթ, ա՛ խալիսը, եդ նրանից չի, էս ո՞նց ա սուս ա կացել:

— Վալլահ, մենք հլէ դրան էինք զահրըմ (նախատում), թէ անիրաւ ա, տեհա՞ք: Չնթռէիս տղէն իսկի թողեց ոչ թէ խեղճ կնիկը գարին դարմանից էլա քոկի, ե՛դոյ գնայ գլխին կաշնի հոգիառի պէս:

— Ես իմ Աստոծը, Արթին ապի, եթէ դա բախշի, մենք ջլի՛ս կզարմանանք:

— Ինչի՞:

— Ախր դա չէ՞ որ, մի կապէկի, մի բուռը դարու համար իրան հօրը գէօռիցը (գերեղմանից) հանող մարդ ա:

— Գիտըմ չեմ, աղպեր, բալքի Սիմոն վարժապետի քարոզներն են ահէ փոխել մարդի՞ն:

— Է՛, խելքս կտրըմ չի՛, քարոզ-մարող Գիգի օղլն բաշա գիրմաշ (քարողը Գիգինի տղի գլուխը չի մտնիլ):

— Կարելի ա առնի, ո՞վ գիտէ. հլա համբերելու վախա (ժամանակ) շատ ունենք, — ասում էին նրանք:

Ե.

Թէպէտև վեց թաղար գարին վեց ամիս հաղիւ պիտի բաւականանար թուով էլ վեց որբերին, թէև հատնելուց վերջն էլ մուրացկանութիւն էր սպասում խեղճերին, բայց այրին մի առ ժամանակ թեթևացել էր ծըլաքները հնձիլ տալու վշտերից և մանածը շարունակելու վրայ էր մտածում միայն, բայց այնուամենայնիւ «դորտան բնում» դեռ շատ փորձանք էր սպասում նրան...

Մի երեկոյ, բացի լուսնի խաւարումից, այնքան բազմաթիւ և պայծառ աստղերն ևս հորիզոնի շուրջը վաղուց դէզ-դէզ ելած ամպերն երեսներին բաշելով, այրու գիշերն այնքան մթին, այնքան ակնակուր էին դարձրել, որ եթէ մատս աչքդ կոխէի, ամենևին չէիր նկատիլ:

Ակնակրի մէջ այրին նոր ննջելու ժամանակ անաջին անգամ մի խուլ և կասկածաւոր չխկոց էր լսել ու առուհաճ եղած սպասում էր, թէ ինչ պիտի լինի այն:

2խկոցը միքանի վայրկեան դադարելուց յետոյ՝ նորից կրկնուեց:

—Վա՛ճ. սա թուրք պիտի ըլի,—ծիծը մանկան բերանից առնելով, երկիւղածութեամբ շշնջաց սյրին,—լաւ, երկնքին էլա այեան (յայտնի) գետնքին էլ, որ ես կոկալըմս (խրճթումս) հինգ թաղարուկէս գարուց ու մի դորակից (սափորից) սափահի ուրիշ հարստութիւն չունեմ, անիրաւն ո՛ւր (ինչո՛ւ) ա գալի, հը՞...:

Փոքր ինչ լուելուց յետոյ, նորից շարունակեց խօսել շփոթուած:

—Տէ՛ր Աստուած. չեկոցը հ'մէլ խշշոցի փոխուեց,—էլի ականջ դնելով մրմնջաց,—խշշոցն էլ՝ գա՛լիս, գա՛լիս՝ կտրււմ ա, էլի գա՛լիս, գա՛լիս՝ կտրււմ ա...:

Ձէ՛, ո՛վ, ինչ էլ ո՛ր ա, խաբսը տալով ա գալի, որ բէյշափիլ (յանկարծ) վրէս դուս գայ: Ա՛խ, ինչ անեմ, Աստուած, թէ տեղիցս ժաժ կգամ, զրաղ կլեմ, վա՛յ թէ մինն երկուսն էլ կոկալիս քամակումն ըլեն տապ արա՛ծ (թագ կայացա՛ծ), վա՛յ թէ իսկի իսան չի, գեաղան, քաւթաբիւսի ա, գալիս ա քորփենոնցս խեղտոտի՞...:

Վըլ՛հ, չնի էն անիրաւն ա, որ իմ ջրի տարածի, Մէջ. լուսի կենդանի վախան էլ ուզւում էր անըմս կոտրի. Հը՞, ի՞նչ անեմ տեղիցս ժաժ գա՛մ, թէ չէ: Ա՛մա, մարդ պետք ա մբիչ էլ խելքին լսի, միտքը շատ հեռու ա տանըմ,—տեղիցս ժաժ չեմ գալ, ճարս ինչ, իմ ճակատին էլ հալքաթ սև ամպերի պէս սև-սև օրեր են գրուած. թէկուզէ գեաղան էլ ըլի, կուռիլ դեմ, մարդշուն էլ ըլի, կուռիլ դեմ, հօ չեմ թողալ որ...,—վճռական կերպով սասաց նա և երկիւղից արիացած՝ մի փայտ ձեռքը գցելով՝ սպասեց վրտանգին:

Խշտոցը կամա՛ց-կամա՛ց մօտեցաւ խրճթի սողխաղքին և հէնց ուզում էր որբերին կոխ տալ մթութեան մէջ, Սարգիւնն այնպիսի աղէկտուր ճիչ արձակեց, որ կարծես թէ թունաւոր օձեր թափուեցին ծոցը:

—Անամօթ, անհոգի, կոկալս անտէր ես տենըմ, հա՛, մարդիս սպանեցիր էն՝ մաքով, որ գաս անըմս էլ կոտրե՞ս...:

—Սարգիւլ ջան, սո՛ւս. պարտադ բեզ կբախշեմ,—լսուեց կոկալի շէմքում:

—Եդ դա՛ւ...:

—Սարգիւլ...:

— Եդ դառ, եդ դառ անիրաւ, թէ չէ՛, ճակատդ փեղք եմ անում։

— Քեզ համար մի դերիայ էլ կառնեմ... սո՛ւս, թող... կամաց խօսա, ինձ բիաբուռ կանես։

— Անիրաւ գեղա՛ն, այ բեզ կամացը, — աղաղակեց և ձեռի փայտով շրկեացրեց թէ չէ, շնացող Գիգինի աղէն բոռ արջի նման՝ ապառաժուաթի բեկորները փլելով իրեն բաց թողեց գէպի ձորը։

Հարան ընկաւ, վշտացած այրին վերեւից բարեր էր գլորում ետեւից, իսկ երեսներն արթնացած խրճթի դրանը ճչում էին սարսափահար։

— Գնա՛, անիրաւ... մի օր բոլ կնիկն էլ իմ օրերը կտեսնի, — փախչողի ետեւից մի անգամ էլ կանչեց այրին և դառնալով, իւր ահաբեկուած որբերին գուրգուրել սկսեց։

— Ո՞վ պէտքա ըլի էն անամօթը, — մինչև լղջի բացուիլը հետաքրքրուած ասում էին հեռուից լսողները, թէպէտև ոչ ոք չէր կասկածում, թէ անամօթը Գիգինի աղէն չի լինելու, որովհետև վերջինս, միքանի աթրի գիւղից դուրս՝ բաղաբներում էլ էր շրջել, աւելի հմտացել էր գիշեր-նութեան արհեստին, թէև գիւղում ուրիշներն էլ նրանից պակաս չէին... ¹⁾

Կիրակի առաւօտեան այրին փոխանակ ուրիշ կանանց նման խաղաղ սրտով ժամ գնալու, սեւասրած — վշտերին մի նոր վիշտ ևս աւելացրած գիւղի գայլաբերան տանուէրին գանգատ գնաց։

— Ըհ՛ըն, հրէս էլի գալիս ա, — գիւղական դատարանի շէմքից դուրս ծկրակելով, հաղորդեց գզիրը, որ բազմութեան առաջ միշտ սատանի պուշի նման ցցուած էր լինում տանուէրի գլխին։

Այրին, մերկ մանուկը գրկում հուպ առած կրկին, մօտենալով դատարանին՝ գլխի պառուռուած փալասով երեսը ծածկեց, գնաց կանգնեց տանուէրի առաջ, և, մի պատանու բերանով ²⁾ արաւ իւր տխուր գանգատը...

— Ի՛նչ ա ուզում, ընչի՞ ա եկել եդ որբը վերին, այ

¹⁾ Գիշերնուկ կնշանակի չղջիկ, գիշերը ման եկող։

²⁾ Խօսալ ամաչում էր։

տղայ, — դեռ իրեն չդարձած Թարգմանիչ պատանուէն հարցրեց գայլաբերանը:

— Տանուտէր, ասմա Գիգիւնի տղէն գիշերս եկաւ մեզ սրտաճաք արաւ...

— Սրտաճաքը ո՞րն ա, աղճի:

— Ասա եկաւ որ... կոկալս մտնի..., — պատանու ականջին կրկին ամօթխած շշնջաց պրին:

— Ասմա՛ «եկաւ կոկալս մտնի...» — Թարգմանեց պատանին:

— Հա՛, հասկացայ ինչ ա ասում: Հասկացայ, ամա ասա դրան, թէ ոնց որ եկել ա նհէ էլ ամուռդ ըրիսիդ եդ դառ, դնա, կորի, թէ վեկկենամ սաղ էնլիգի (ամբողջ հասարակութեան) առաջ բխաբուռ կանեմ: Լաչա՛ռ, անդգամ, մարդը (Գիգիւնի տղէն) գնացել ա իրան գարին, իրան պարտքն ուղեւ, հըմի դա եկել ա շառով տալի նրան, — ամբոխին դառնալով նախատեց պրուն և ասաց, — ադա, տար էդ լաչառին, կորցրու ըստեղան, — հրամայեց գզրին:

— Գիգիւնի տղիցը զա՛տ ա կուլ տուել հա՛, — նկատելով խորամանկ տանուտէրին, ընկերին աչքով արաւ մինը:

— Հա, թխսի ձուի պէս տակն արած կլնի անպատճառ, — պատասխանեց միւսը, իսկ գզիրը հրելով պրուն, հեռացնում էր դատարանի շէմքից...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶԱՆԻ ԾՈՒՂՈՒՐԵԱՆՅ

